

**Նախ ընդունվեք ԱՈՒԿ**

**Լիդիա ԲԱՐՈՅԱՆ, Հաշ Երկու Էկոնոմի ՓԲԸ ԱՈՒԿ-ի 2006թ. շրջանավարտ**

Լավ աշխատանք գտնելը Հայաստանի ագրոբիզնեսի զարգացող ոլորտում այնքան էլ հեշտ գործ չէ: Այս առումով Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի շրջանավարտներն ունեն երկու կարևոր առավելություն՝ միջազգային ուսումնական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ և արտադրական պրակտիկաներում ու ուսումնական գործուղումներում այդ գիտելիքների գործնական կիրառման փորձ: Օրինակ ես, ոչ վաղ անցյալում ԱՈՒԿ-ում սովորելու ժամանակ, առիթ եմ ունեցել իմ արտադրական երկու ութշաբաթյա պրակտիկաներն անցկացնել հանքային ջրերի Ջերմուկ Գրուսի և Դիլիջան Ֆրոլովա ընկերություններում: Բացի այդ, մասնակցել եմ բազմաթիվ կարճաժամկետ ուսումնագործնական գործուղումների՝ տարբեր մարզերի ֆերմերային տնտեսություններ, ագրոբիզնեսի և այլ ձեռնարկություններ: Պրակտիկաներն ու գործուղումները հնարավորություն տվեցին առավել լավ ճանաչել հայրենական ընկերությունները, ուսումնասիրել և վերլուծություններ անել դրանց արտադրանքի վերաբերյալ: Այս ամենն ինձ հնարավորություն ընձեռեց առավել լավ պատկերացում կազմելու Հայաստանի տնտեսությունում տիրող ընդհանուր իրավիճակի վերաբերյալ:

ԱՈՒԿ-ում սովորելու տարիներին ես հնարավորություն ունեի մասնակցել ԱՄՆ գյուղէպարտամենտի հայաստանյան ներկայացուցչության կազմակերպած կամ հովանավորած խորհրդաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին: Ինձ բախտ է վիճակվել մաս կրթական ցուցահանդեսների ժամանակ ներկայացնել ԱՈՒԿ-ը:

ԱՈՒԿ-ի վերջին կուրսում ՀՊԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնի տնօրեն Լուսինե Մնացականյանն ինձ ուղարկեց «Հաշ Երկու Էկոնոմի» բաժնետիրական ընկերությունում բափուր աշխատատեղի մասին մի հայտարարություն: Ես անմիջապես ուղարկեցի կենսագրական և շուտով հրավերը ստացա մասնակցելու հարցազրույցի: Կարո՞ղ եք կռահել, թե ովքեր էին իմ հիմնական մրցակիցները: Անշուշտ չեք սխալվում՝ իմ համակուրսեցիները, այսինքն՝ մրցակցությունը լարված էր լինելու:

Ինձ հաջողվեց հաղթել մրցություն և այժմ ես Հաշ Երկու Էկոնոմիում աշխատում եմ որպես վարչական գծով օգնական: Իմ աշխատանքային պարտականությունների մեջ եմ մտնում աշխատակիցների աշխատանքային պայմանագրերի նախապատրաստումը, ամսական և եռամսյակային ֆինանսական և հաշվապահական հաշվետվությունների կազմումը, բանկային փոխանցումների և կանխիկի ստացման ձևերի լրացումը, թարգմանությունները, գնումների կազմակերպումը, գրասենյակային գույքի պահպանումը, ընկերության ամսական վճարումների կատարումը և շատ այլ պարտականություններ՝ ըստ հանձնարարության: Եվ իմ բոլոր

**Enter the ATC First**

**By Lidia BAROYAN, H2 Economy ATC Graduate - 2006**

Finding a good job in the growing agribusiness sector of Armenia is not an easy undertaking. However, the Agribusiness Teaching Center graduates have two major advantages: knowledge in accordance with international academic standards and



an experience of their application in internships and field trips. While being an ATC student until recently, my experience of eight-week internship programs has been with the Jermuk Group and Dilijan Frolova companies. In addition, I have participated in many short-term field trips to farms, agribusiness and other companies in different regions of Armenia. This allowed me to get a good knowledge on many companies currently active in our country, carry out studies and analysis on products produced by them. All this helped me get a better understanding about the general situation in Armenia's economy. The ATC made it possible for me to participate in conferences, seminars, and other events organized or sponsored by the USDA Armenian representation. I had the privilege of presenting the ATC at educational exhibitions.

I was in my last year of study at the ATC when Lusine Mnatsakanyan, Director of the Armenian State Agrarian University's Career Placement and Counseling Center, sent me a vacancy announcement in "H2 Economy" CJSC. I sent my resume immediately and received an invitation to an interview. Guess who were my main competitors. Yes, my fellow fifth year ATC students, which means there was a rather tough competition.

I was lucky to win the competition and now I am the Administrative Assistant at H2 Economy. My job responsibilities include but are not limited to assisting the Director in preparing employee manuals and/or contracts, preparing monthly and quar-

պարտականությունները ես անում եմ բարեհաջող կերպով և ժամանակին՝ ինչպես ԱՈՒԿ-ի մեր դասախոսներն են սովորեցրել:

Այս հոդվածը երախտագիտության խոսք է ուղղված ԱՈՒԿ-ին և ՀՊԱՀ Աշխատանքի տեղավորման կենտրոնին՝ հաղորդած գիտելիքների և աշխատանք գտնելու հարցում օգնության համար: Ինչպես վերևում արդեն նշել եմ, երիտասարդ մասնագետների համար հայաստանյան ագրոբիզնեսի զարգացող ոլորտում լավ աշխատանք գտնելն այնքան էլ հեշտ չէ: Ոգտորիչ աշխատանք գտնելու առումով ո՞րն է լինելու ձեր առաջին քայլը: Դե, նախ և առաջ պետք է ընդունվել ԱՈՒԿ և վայելել այնտեղ սովորելու բավականությունը: ○

terly financial and accounting reports, filling the purchase order, bank transfer and/or cash withdrawal forms, conducting translations, assisting in making company's monthly payments, assisting in procurement and maintenance of office equipment and many other functions as assigned. And I do all my assignments successfully and timely like our instructors of the ATC have taught.

This article is an expression of gratitude to the ATC and the Career Center for giving the knowledge and helping me find a good job. As I stated above, for young specialists it is hard to get a good job in the growing Armenian agribusiness sector. What would be your first step to get an exciting job? Well, enter the ATC first and enjoy studying there! ○

## Նորից Ուկրաինայում

Արթուր ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կառավարման սկզբունքների դասախոս



Կիևի օդանավակայան ինքնաթիռի վայրէջքից անմիջապես հետո առաջին տպավորությունը, որ ստանում ես, այն է, որ Ուկրաինան բարեկամական երկիր է: Անցնում է մեկ շաբաթ, հետո երկրորդը, բայց այս առաջին տպավորությունն այդպես էլ չի փոխվում: Իսկ երկրորդ տպավորությունն այն է, որ բոլորն այստեղ խոսում են ռուսերեն և հաղորդակցության որևէ խնդիր չի առաջանում:

Ամեն ինչ սկսվեց անցյալ տարվա դեկտեմբեր ամսին, երբ EERC (Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների կոնսորցիում) կազմակերպությունը և Կիևի տնտեսագիտության դպրոցը գիտական աշխատանքների մրցույթ հայտարարեցին, որը պետք է անցկացվեր Կիևում՝ խորհրդաժողովի ժամանակ: ԱՈՒԿ-ի անցյալ տարվա շրջանավարտ Հայկ Ղազարյանը, հինգերորդ կուրսի ուսանողուհի Մարիա Պողոսյանն ու տողերիս հեղինակը, մասնակցելով մրցույթին՝ իրավունք նվաճեցինք մասնակցել կիևյան խորհրդաժողովին:

«Անցումային տնտեսություններ. վկայություններ Ուկրաինայից և հարևան երկրներից» վերտառությամբ

## Back to the Ukraine

By Arthur GROGORYAN

Instructor of Principles of Management

The first impression that comes when the airplane lands in the Kyiv airport is that the Ukraine is a very friendly country. One week passes, then the second one, but the opinion does not change. The second impression is that everyone speaks Russian and there is no communication problem.



Everything started in December when the EERC (Economics Education and Research Consortium) and KSE (Kyiv School of Economics) announced a competition for research papers to present in the conference in Kyiv. An ATC graduate, Hayk Ghazaryan, a current senior student, Maria Poghosyan and this reporter were accepted to present the research papers. The subject of the conference was "The Economics of Transition: Evidence from Ukraine and Surrounding Countries". There were more than a hundred guests from the post-Soviet countries, Europe and the US, who were also participating in panel discussions after the individual presentations. I can evaluate the quality of nearly all papers as very high, which included a lot of modeling and many problem explorations. The conference in general was excellently organized.

Many interesting and useful topics were discussed regarding the future development perspectives of countries in the region, economics of a firm, corruption problems, strategy for development of agriculture and many others.

Such conferences increase personal professionalism of participants as well as improve their professional speaking and communicating skills.

Upon our return, a Friday seminar was organized in the ATC entitled "How to do an undergraduate research". The goal



խորհրդաժողովին ավելի քան հարյուր հյուրեր էին մասնակցում նախկին խորհրդային Միության և Եվրոպայի երկրներից, ինչպես նաև ԱՄՆ-ից: Անհատական մերկայացումներից հետո բոլորս մասնակցեցինք նաև խմբային քննարկումների: Ես գրեթե բոլոր աշխատանքների որակը շատ բարձր կգնահատեի. դրանցում մեծապես առկա էին

մողեւածութիւնն ու մեծ թվով հիմնախնդիրների ուսումնասիրումը: Ընդհանուր առմամբ, խորհրդաժողովը գերազանց էր կազմակերպված:

Քննարկվեցին տարածաշրջանի երկրների հետագա զարգացման հեռանկարներին, ընկերությունների տնտեսավարմանը, կոռուպցիայի հիմնախնդիրներին, գյուղատնտեսության զարգացման հեռանկարներին վերաբերող բազմաթիվ հետաքրքիր թեմաներ: Առհասարակ նման խորհրդաժողովները նպաստում են մասնակիցների, հատկապես երիտասարդների, թե մասնագիտական աճին և թե բանախոսական ու հաղորդակցական հմտությունների բարելավմանը:

Հայաստան վերադարձին, ԱՌԼԿ-ի հերթական ուրբաթօրյա սեմինարը մենք նվիրեցինք «Ինչպես կատարել ուսանողական գիտական աշխատանք» թեմայի լուսաբանմանը: Նպատակն էր ուսանողներին հիմնական տեղեկատվություն տրամադրել գիտական հետազոտություններ կատարելու վերաբերյալ և նրանց խրախուսել գիտական հոդվածներով մասնակցելու համանման խորհրդաժողովների. ԱՌԼԿ-ն այս առումով նրանց բավականաչափ գիտելիքներ է տվել:

ԱՌԼԿ-ի ուսանողներն այն մարդկանցից են, ովքեր պետք է առաջամարտիկ դեր ստանձնեն. Իսկ խորհրդաժողովները պատեհ առիթ են գիտելիքների փոխանակման, մասնագիտական վարպետության բարձրացման, անձնական կապերի հաստատման առումով:

Ի վերջո, ԱՌԼԿ-ի թե հայ և թե վրացի ուսանողները կարող են աշխատանքային լավ հնարավորություններ գտնել Ուկրաինայում: Այդ երկիրն ակտիվ եվրաինտեգրման քաղաքականություն է իրականացնում և կարող է Վրաստանի և Հայաստանի համար դառնալ լավագույն առևտրային և արտադրական գործընկեր: ○



was to provide students with basic information about implementation of scientific research and encourage them to write research papers and participate in similar conferences since the ATC provides them enough knowledge for that.

ATC students are the people who should take the first mover advantage. Conferences are a nice opportunity for sharing knowledge, increasing personal professionalism and creating contacts.

Additionally, both Armenian and Georgian students of the ATC can see many business opportunities in Ukraine; it is a country that pursues an active Euro-integration policy and can become a very good trade and production partner for Georgia and Armenia.

By the way, the ATC experience indicates that Ukraine is also a good country for ATC students to have their summer internships in. ○

## Էկոնոմետրիկական նոր առարկա է ԱՌԼԿ-ում



**Հովիկ ՀԱՐՈՒԹՅՈՆՅԱՆ, ԱՌԼԿ 5**

Ինձ համար հաճելի անակնկալ էր, երբ իմացա, որ գարնանային կիսամյակում Էկոնոմետրիկայի դասընթաց ենք անցնելու: Այդ դասընթացի կարևորության մասին շատ էի լսել, և հիմա վերջապես ունենք այն ուսումնասիրելու բացառիկ հնարավորությունը: Ժամանակ առ ժամանակ հայտարարություններից տեղեկանում ես, որ այսինչ տեղում Էկոնոմետրիկայի դասընթաց են առաջարկում, որի համար պահանջվում է այսքան վճար: Իսկ ԱՌԼԿ-ում դասավանդվող դասընթացը ոչ միայն անվճար է բոլոր ուսանողների համար, այլև շատ հետաքրքրական և արդյունավետ: Ի դեպ, ես շատ անգամներ ԱՌԼԿ-ի նախկին ուսանողներից լսել եմ, որ իրենք շատ կուզենային Էկոնոմետրիկա սովորել, բայց իրենց բախտն այս հարցում չբերեց, ինչպես մերը:

Շեշտելով դասընթացի կարևորությունը, մյուս կողմից էլ պետք է նշեմ, որ Էկոնոմետրիկական թթու թան չէ. այն պահանջում է այնպիսի առարկաներից գոնե միջին մակարդակի գիտելիքներ, ինչպիսիք են վիճակագրությունը, գծային հանրահաշիվը և տնտեսագիտության տեսությունը: Էկոնոմետրիկայի դասընթացը, կարելի է ասել, այս երեքի հանրագումարն է: Քանի որ մենք արդեն անցել էինք այս բոլոր անհրաժեշտ նախընթաց դասընթացները, արդեն պատրաստ էինք ընդունել Էկոնոմետրիկայի մարտահրավերը:

Այս դասընթացին բացառիկություն է հաղորդում նաև այն

## Econometrics Is a New Discipline in ATC

**By Hovik HARUTYUNYAN, ATC 5**

It was a pleasant surprise for me to learn that the ATC would be offering a course in Econometrics during the spring semester. I had heard a lot of good things about the importance of this course, and now we have an exceptional opportunity to study it. Every once in a while you can read in the advertisements



that an Econometrics course is offered and that you have to register and pay for it. While the course offered by ATC is completely free for all students, which is already great in itself! By the way, I

հանգամանքը, որ այն դասավանդում է Հայաստանի Լավագույն մասնագետներից մեկը՝ Վահրամ Դուռչյանը: Նա ամեն ինչ հնարավորինս մատչելի ձևով է բացատրում: Անշուշտ, եթե լրջորեն ուզում ես «մարսել» հայեցակարգերում պարփակված հասկացությունները, ապա պետք է տանը ինքնուրույն աշխատանք կատարես: Ի դեպ, մենք այս առարկայի դասագրքեր չունենք, բայց դու կտես: Դուռչյանի դասախոսությունները միանգամայն բավարար են:

Էկոնոմետրիկայի դասն անհնար է պատկերացնել առանց վիճակագրական բնույթի համակարգչային ծրագրակազմի: Որպես այդպիսին, դասի ժամանակ մենք օգտագործում ենք «Ստատա» ծրագրակազմը: Իհարկե մի փոքր անսովոր է, բայց մենք ձգտում ենք ամեն ինչ անել, որ տիրապետենք:

Ես իսկապես ոգևորված եմ և ձգտում եմ այս առարկայից հնարավորին չափ շատ գիտելիքներ ստանալ: Ի վերջո, Հայաստանում այս գծով շատ մասնագետներ չկան և բարձր վարձատրվող աշխատանք գտնելու առումով ճիշտ կլինի լրջորեն զբաղվել այս առարկայով: ○



heard many times from former ATC students that they would much like to take Econometrics, however they were not as lucky as we are now.

Apart from the importance of that course, it also has to be mentioned that Econometrics is not a piece of cake. It requires an intermediate level of knowledge of such disciplines as Statistics, Calculus, and Economic Theory. The course of Econometrics is simply a mixture of all this. Having gone through all the necessary prerequisite courses we were ready to meet the challenge.

Another thing that makes this class an exceptional one is that we have a lecturer with western education and work experience teaching this course. Vahram Ghushchyan is one of the best professionals teaching Econometrics in Armenia. He explains everything to us in the most comprehensible way possible. But if you really want to get the idea behind the concept you have to go home and do a little studying yourself. We do not have books for that class, but the lecture notes provided by Dr. Ghushchyan are enough.

Usually econometrics class is taught with a use of statistical software. As such we use “Stata”. It is a bit unusual for us, but we do our best to master the program.

I am looking forward to obtaining as much knowledge as possible in this class, because only knowledgeable econometrician can be good candidates for high-paying jobs especially in Armenia, where there are not many professionals in this area. ○

## «Կասկադ Ինվեստմենտը»՝ ձեր ապագայի համար

Կասկադ Ինվեստմենտ ընկերության գործադիր տնօրեն Հայկ Պապյանը փետրվարի 5-ին հանդիպեց ԱՌԿ-ի ավագ կուրսի ուսանողների հետ և դասախոսություն կարդաց նրանց համար: Դասախոսությունը միջազգային գործարարությունն առարկայի ուսուցման ծիրում նախատեսել էր այդ առարկայի դասավանդող դասախոս Աղասի Մանուկյանը: Դասախոսության ընթացքում հյուրն անդրադարձավ թոշակի անցնելուն, ուսման վարձերին և տրաստային հաշիվներին առնչվող մի շարք հարցերի:

Պարոն Պապյանն ուսանողներին բացատրեց, թե ինչու են տրաստային հաշիվներն ավելի ապահով և շահութաբեր, քան բանկային հաշիվները: Ըստ նրա, ֆինանսական շուկայում գոյություն ունեցող տատանումները գործնականորեն որևէ ազդեցություն չեն թողնում տրաստային հաշիվների վրա: Բանկային համեմատությամբ, տրաստային հաշիվների նշանակալից առավելություններից մեկն էլ այն է, որ դրանց ապահովությունը երաշխավորում է պետությունը: Ինչ վերաբերում է շահութաբերությանը, ապա այն ապահովվում է երկարաժամկետ գանձապետական պարտատոմսերի, կորպորատիվ պարտատոմսերի և այլ գործիքների միջոցով: Եվս մեկ առավելություն է շուկայական գների ժամանակագրական վերլուծությանը հետևելու հնարավորությունը:

Թեման մեծապես հետաքրքրեց ուսանողներին, իսկ ձեռք բերված տեղեկատվությունն իսկապես օգտակար էր նրանց համար: Պարզվում է, Կասկադ Ինվեստմենտը երկրում այս կարգի ֆինանսական ծառայությունների մատուցման գործում առաջամարտիկ է:

## Cascade Investment Invests in your Future

Haik Papyan, Executive Director of Cascade Investments, met with the ATC senior students Monday, February 5 within the scope of International Business course taught by Agassy Manoukian. The lecture included retirement and college planning and trust accounts. Mr. Papyan explained the students why



trust accounts are safer and more profitable. According to him, fluctuations in the financial market virtually have no effect on trust accounts. One of the significant advantages of trust accounts versus bank accounts is that the Government guarantees their safety. And the profitability is provided through long term treasury

Հայկ Պապյանի հիմնական ուղերձը ԱՈՒԿ-ի ուսանողներին, այնուամենայնիվ, այն էր, որ նրանք իրենց աշխատանքային կարիերայի հենց սկզբից պետք է մտածեն իրենց ... թոշակների մասին: «Ձեր ապագայի մասին այսօրվանից պետք է մտահոգվեք» - ասաց նա: Իսկ ըստ պարոն Պապյանի, ապագայում իրենց բարեկեցությունն ապահովելու լավագույն միջոցը դրամը տրաստային հաշիվներում պահելն է:

Ի դեպ, Կասկադ Ինվեստմենտի գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունների համար կարելի է այցելել Կասկադ Ինվեստմենտի վեբկայք՝ [www.cascadeinvmts.com](http://www.cascadeinvmts.com): ○

bonds, corporate bonds, etc. Another advantage is the ability to follow the market trend. The topic interested the students greatly and the information obtained was useful for them. The Cascade Investment appears to be the pioneer in Armenia providing this type of financial services. However, the basic message Haik Papyan conveyed to ATC students was that they should think over their ... retirement from the beginning of their professional career. "You should take care of your future today," he said. According to Mr. Papyan, one of the best ways to secure their being well-off in future is keeping their money in trust accounts. For more information about Cascade Investments, visit [www.cascadeinvmts.com](http://www.cascadeinvmts.com). ○



## LOVE IS...

On February 14th, the ATC students celebrated two holidays for lovers 'in one': the Armenian Sourb Sargis Day and the international Valentine's Day. St. Sargis is the protector of youth and is believed to help them find their 'second half'. Just like Valentine.

Sourb Sargis Day is becoming the loveliest holiday in the life of Armenian youth though it is not as commercialized as Valentine's Day is throughout Europe and the United States.

ATC students love both holidays.



Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation  
74 Teryan St., Yerevan, Armenia  
In association with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia  
Tel: (37410) 52-28-39, 56-95-70;  
Fax: (37410) 56-62-21 E-mail: [info@icare.am](mailto:info@icare.am)  
[www.icare.am/atc](http://www.icare.am/atc)  
Հ. ՌԱՄՇԵՅՔԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 74